

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱ ԶՎՅԱԳԻՆՑԵՎԱՅԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

(Հայ-ռուսական գրական կապերից)

ԿԱՐԵՆ ԽԱՆԱՅԱՆ

Վերա Զվյագինցևա... Ժանոթ ու հարազատ այս անունը վաղուց է մտել հայ մշակույթի պատմության մեջ: Հայ ընթերցողը նրան ճանաչում է որպես հիմնալի բանաստեղծուհի, բազմալատասկ թարգմանչուհի, հայ մշակույթի գիտակ ու հայ գրականության անշահախնդիր բարեկամ: Նա զինակիցն ու ժառանգորդն է ռուս մշակույթի այն ականավոր ներկայացուցիչների, որոնք իրենց կյանքի իմաստը տեսել են մաս հայ գրականության խոր ուսումնասիրության և մասսայականացման մեջ: 20-րդ դարի 30-ական թվականներից սկսած մինչև կյանքի վերջը Վ. Զվյագինցևան իր տաղանդը նվիրաբերեց հայ պոեզիայի թարգմանությանը: Նա ռուս ընթերցողի սեղանին դրեց միջնադարյան մեր տաղերգուների, դասական և նորագույն շրջանի անվանի պոետների ընտիր սանդղծագործությունների մի զգալի մասը: Տաղանդավոր թարգմանիչ լինելու հետ մեկտեղ Վ. Զվյագինցևան մաս ինքնատիպ բանաստեղծ էր: Կյանքը կապելով հայ հարուստ մշակույթի հետ, Վ. Զվյագինցևան ստեղծել է բանաստեղծությունների մի հրաշալի շարք՝ նվիրված Հայաստանին և հայ ժողովրդին, որպես ամմար սիրտ և հարգանքի տուրք: Մեր այս ուսումնասիրությունը նպատակաուղղված է բանաստեղծուհու հայաստանյան շարքի վերլուծությանն ու գնահատմանը:

* * *

Վ. Զվյագինցևան (1894-1972) մի կողմից շարունակելով ռուսական պոեզիայի ավանդույթները, մյուս կողմից էլ ուսումնասիրում էր հայ դասական գրականության ավանդները և ուշի-ուշով հետևում իր հայ գրչակից բանաստեղծների կուտակումներին: Այսինքն, բանաստեղծուհին ծանոթ էր հայ դարավոր գրականության թեմատիկ-գաղափարական և գեղարվեստական լուծումների ընթացքին: Դրանով էլ պետք է բացատրել ռուս բանաստեղծուհու "Իմ Հայաստանը"՝ ժողովածուի համանուն շարքի առանձնահատկությունները: Առաջին հերթին նկատի ենք առնում նրա ազգային պատկանելության գիտակցումը, որի համար հպարտ է ինքը, և հենց այդ զգացումով էլ ստեղծում է իր սրտի դավթարը առ Հայաստան, և երկրորդ, իր այդ երգերում ինքը հանդես է գալիս ոչ որպես դիտորդ, բարեկամ, իմայված ճամփորդ, այլ որպես հայ ժողովրդի դարավոր իդեոլին ու տառապանքներին, առօրյա սխրանքներին ու տվայտանքներին, հուսախաբություններին ու ակնկալություններին ծանոթ և այդ ամենը իրենը համարող երգչուհի-դուստր: Այս առանձնահատկություններով էլ հենց բացատրվում է Վ. Զվյագինցևայի "Իմ Հայաստանը"՝ շարքի անմիջականությունն ու հաջողությունը: Չպետք է մոռանալ, որ հայ դասական գրականության մայր ուղղությունը՝ հայրենասիրական քնարերգությունն էր: Այն մի առանձնահատուկ ուժով վերականգնեց մաս նորագույն շրջանի պոեզիայում: Հայրենասիրության թեման փայլեց

անցյալի եին էջերով և ներկայի նոր ակոսներով: Պարզ է, որ քննատիկայի առաջին պլանի վրա պետք է լիներ ժողովրդի անցած ճանապարհի գիտակցումն ու պատկերումը: Դարերի փորձի փիլիսոփայությունը պիտի խոսեր, արձագանքերով ազգային կառուցվածքի բնույթին: Հայ պոեզիան հազարամյակների ընթացքում ժողովրդական ոգու երանգներից հյուսել էր իր քարտեզը, որն ամբողջության մեջ խորհրդանշում է մայր Հայաստանի գեղարվեստական կերպարը: Այդ կերպարը մասունքների անբաժան խտացում է: Հայաստան՝ ասել է փառավոր անցյալ, Տիգրան Մեծ, Վարդան Ջորավար, ասել է՝ Մաշտոց-Չարենց, ասել է, Եփրատ-Արաքս, ասել է՝ կորուսյալ հողեր ու հոգևոր հայրենիք, ասել է պատանդված Մասիս ու ծաղկավիշ Արագած, աստղաժպիտ Սևան ու խենթ Հրազդան:

Ռուս երգչուհու բանաստեղծական հուզաշխարհում իսկ և իսկ այս համայնապատկերն է ներառված, որ ինքնատիպ շարունակությունն էր Եկատերինա Նեկրասովայի, Ալեքսանդր և Յուրի Վեսելովսկիների, Մաքսիմ Գորկու, Վալերի Բրյուսովի, Ալեքսանդր Բլոկի, Մերգեյ Գորոդեցկու, Մանդելշտամի և շատ շատերի առ Հայաստան հոգու գույներից հյուսված քարտեզի: Այս առումով էլ Վ. Ջվյագինցևայի "Իմ Հայաստանը" շարքը կարելի է համարել հայոց հայրենապատումի մի ուշագրավ էջ: Ռուս բանաստեղծուհին իր երազանքի գունավոր թելերից է հյուսել Հայաստանի պատկերը: "Չյունապատ դաշտերին" սովոր բնարական հերոսը ընկնում է "արևի երախը՝ Աշխարհը շոգի ու լեռների": Բախտի առջև ծնկաչափ չի իջնում նա, չի տրտնջում ճակատագրից, որովհետև նրա առջև իր դռներն է բացում" ... նոր ու բիրիական դրախտը", որտեղ "երգից մարդու սիրտ է մարում": Վ. Ջվյագինցևան հոգու մեջ Պուշկինի և Լեոնտովի երգի ձայնը, սրտում՝ շառաչը մայր Վոլգայի, իր դեմդիմաց հայտնագործում է իր Հայաստանը՝ հողեղեն ու ոգեղեն խորհրդանիշներով:

*Ես մանկուց միշտ սովոր Հյուսիսին,
Մի ժամ էլ չեմ կարող համբերել,
Առանց ձեզ՝ Հրազդան ու Մասիս,
Առանց ձեզ՝ Կոմիտաս, "հորովկ":*

Վ. Ջվյագինցևան ազգային պատկանելության իր նվիրական զգու պաշտպանն ու խորհրդանիշն է: Նա գիտակցում է, որ իր մորը չսիրողը ուրե չի կարող: Իր սեփական մորից սկիզբ առած զգացումը Հայաստանի փոխվում է անբացատրելի պաշտամունքի: Ինքն ղփախառնում է գուշակ յաստանի հանդեպ ծնունդ առած կիրքը ինչպես ներարկվեց իր սրտի մեջ իմ մայրիկը կրկնապատիկ", - ասում է բանաստեղծուհին և հաստատում, մոր պես "ծնեռն է սիրել ու բուրը": Ջաքմանայի հարց և անսպասելի ու պատասխան: Բանաստեղծուհին տազնապում է՝ հանկարծ որևէ մեկը և հարավի շուքն է գերել իրեն: Այստեղ բանաստեղծուհին ազնիվ ու անշուքարեկամի իր խոստովանությունն է անում: Ջվյագինցևայի հայաստանանը հանգում է մի կարևոր մարքի, որ Հայաստանը սիրելու համար պետք է նրան, լավ իմանալ նրա ազգային ոգու գոյության առերժվածները... "Ինքն երկիրն է կախարդում, մերք վայրի, մերք բնքուշ այս հողը" - բացականչում տեղծուհին և ընդհանրացնում:

*Սիրում եմ այս մարդկանց քաջարի,
Որ հաճախ, թերևս, և չար են,
Մայրերին այս հյու ու բարի,
Այս նոր ու դարավոր հանճարը,
Նազանքն այս կանացի պարերի,*

*Դարերի այս խոհը ծանրանիստ,
Պղինձը ձուլածո ողերի
Եվ շալլ գույները Մարյանի...*

(Թարգմ. Գ. Էմինի)

Վ. Ջվյագինցևայի հայրենասիրությունը այսպիսով հավասարագործում է հայասիրության: Ուստի նրա ամբողջական շարքը դառնում է հայ ժողովրդի պատմության, Հայաստանի և հայ ճակատագրի, նրա հիշողությունների և ակնկալությունների մի ոսկե շղթա: Նյութը լայն ու բազմակողմանի ընդգրկումներով բանաստեղծականացվում է նրբախյուս գորգի համաչափ գույներով, գարնանային ծաղիկների թույլերով ու բույրերով: Ինչպես Վ. Ջվյագինցևայի մասին խոսափանել է ակամավոր բանաստեղծը. "Նա թափանցել է մեր հոգին, հիացել մեր մշակույթով, ուսումնասիրել մեր պատմությունը, գրականությունը, լեզուն, թարգմանել մեր պոեզիան՝ միջնադարյան տաղերգուներից սկսած մինչև նորօրյա սկսնակները: Եվ այդ արել է սիրուց ու սիրով, արել է հոգու անդիմադրելի պահանջից"¹:

Հայաստանի պատմական անցյալը Վ. Ջվյագինցևայի երգերում խորհրդանշում է հայ ժողովրդի անցած ճանապարհի դժվարությունն ու վեհությունը: Օգտվելով անձնավորման մաներայից, բանաստեղծուհին Հայաստանը ներկայացնում է որպես շնչող, ապրող, ջերմացնող անձ.

*Ինչպես մարդուն են խոր սիրահարվում,
Չայնին, շարժումին, փալլին աչքերի,
Այնպես էլ իմ մեջ, փոթորկոտ դարում
Սիրահարվեցի ես հին մի երկրի:*

(Թարգմ. Ս. Կապուտիկյանի)

Բանաստեղծուհին սիրահարվելու պահը երկրի գեղեցկության հանդեպ թեթև զգացումի երանգ չի համարում: Նա ժողովրդի անցյալը և երկրի գեղեցկությունը շաղկապում է միմյանց, դեմք ու դիմագիծ է հաղորդում նրանց, զարդարում արժանի դեպքերի ու վայրերի պոետական նկարագրով: Աշխարհագրական անունները այստեղ մի կողմից օգտագործվում են կարտոսի, իսկ մյուս կողմից՝ կորստի զգացումն արտահայտելու նպատակով: "Ինչպես մարդուն են խոր սիրահարվում" ստղով սկսվող բանաստեղծությունը մեր ասածի վկայություններից է: Հեքիաթային Դերեղը, Լոռու ձորը, "Հողմերի ձեռքով ժայռին փորագրած որմնաքանդակները", ժանեկազարդ փորագիր քարերը, կանգուն ու կիսավեր վանքերը և այլն վերոհիշյալ բանաստեղծության պատկերային սահմաններն են: Հայաստանի ուժի և հավերժության նախահիմքն ու գալիքին ձգված ընձյուղները բանաստեղծուհին տեսնում է ժողովրդի արարող համճարի մեջ.

*Կանգնել Դվինի ավերակներում,
Չեռքումս՝ կապույա փշուր մի կավե,
Դարեր եմ տեսնում՝ անցած առհավես
Այս գլագուրն փոքրիկ հայելում:*

(Թարգմ. Ս. Կապուտիկյանի)

¹ Հ. Հովհաննիսյան, "Մեր քարեկամը", Վ. Ջվյագինցևայի "Չմեռային աստղ" գրքի առաջաբանը: Հայպետհրատ, 1990, էջ 5:

Հայ ժողովրդի պատմական երբի փիլիսոփայությունը մեկ անգամ չի շոյել Վ. Չվյազինցևայի սիրտը: Նա իր մի շարք երգերում ազնիվ բարեկամուհու իր խոսքը համեմել է հայոց փոքրիկ եղի հավերժացման ու նազանքի, կենսասիրության ու վերածննդի առեղծվածներով: «Քարքարոտ փռչիների մեջ» հայոց փոքրիկ եղը նագում է ինչպես անթառամ վարդ: Աշխարհի բոլոր ծայրերից հյուրեր են գալիս «Վարդագույն տուֆը ժպտում է բաղրին», ջահել վարպետները զարմացնում են անենքին, հրաշքներ են գործում ալեհեր զիտունները, և բարեկամները տեսնում ու համոզվում են, որ հենց այդ նվիրվածության շնորհիվ է, որ «Վարդը նագում, նագում է անվերջ»: Բայց հայոց փոքրիկ եղը նաև ցավ ունի, որովհետև «Մասիսն անուրջ մեզի մեջ է»: Նույնիսկ հյուրերը տեսնելով Արարատի գերված լինելը, ասես իրենց սրտերում մուրճների զարկեր են գգում: Վ. Չվյազինցևան հոգեբանական նուրբ երանգներով բացատրում է նաև հյուրերի հուզվելու պատճառը: Դա արդարության, ճշմարտության ճայն է, որ հնչում է բանաստեղծուհու սրտում, և նոր հոգսերի, նոր գործերի ու հարցերի միջից միշտ երևում է դարավոր Հայաստանի պատկերը՝ նագող վարդի տեսքով:

Մոսկովյան իմ լուռ սենյակում նստած՝

Մաշում եմ օրը քաղցր ջանքի մեջ:

Էզուց նոր հոգսեր, նոր գործ ու նոր հարց...

Իսկ վարդը նագում, նագում է անվերջ:

(Թարգմ. Ն. Չարյանի)

Վ. Չվյազինցևայի հայաստանյան երգաշարում քնարական հերոսը անհատականացվում է այնպես, որ նրանում տեսնում ես հեղինակի անմագորդ սերն ու այրումը: Հեղինակ-քնարական հերոս միասնությունը խոսքը դարձնում է անմիջական, և հեղինակի խոստովանությունը թափանցում է ընթերցողի սիրտը, հնչում որպես հարգատու որդու մենախոսություն: «Չվարթնոց» բանաստեղծության մեջ խոսի ու խորհուրդով լեցուն առդերում Վ. Չվյազինցևան լսում է հայոց դարերի լույսերը, ականջների մեջ՝ քաղին քարացած հայոց արծվի քեռի շառաչը: Բանաստեղծուհին նկարչի հմտությամբ վրձինը թաթախում է իր հոգու ներկապնակում և ասես կտավի վրա նկարում:

Պարզած իր ձյունն առագաստն անրիծ,

Մասիսն է լողում ու չի հեռանում,

Բարդին, մայր մտնող արևի ցուրից

Մոմի պես այրվում, քայց չի վերջանում:

Փառքով ծանրաբեռն հայ արքայի պես

Իսահակյանը հակվել է տխուր,

Չկա այլ երկիր սրա նման վես,

Եվ այս ջրի պես՝ անմահական ջուր:

Ես խմում եմ այն հոգով ծարավի,

Ինչպես թռչունը՝ կաթին անձրևի:

(Թարգմ. Հ. Մուրադյանի)

Վ. Չվյազինցևայի «Իմ Հայաստանը» շարքի բանաստեղծությունները սիրո ու կարոտի, զարմանքի ու հիացմունքի, խռովքի ու հավատարմության մի-մի խոստովանություններ են: Այդ երգերում անձնութագրության և բարեկամության ջատագովի պոզա չկա, կա ազնիվ դուրեր խոսք, առաջին անգամ Հայաստան այցելած և առաջին հայացքից սիրահարված մարդու զրույց: «Առաջին ամառը Հայաստանում» բա-

նաստեղծությունը (թարգմ. Ն. Ջաբրանի) այդ երևույթի անկեղծ խոստովանություն է: Առաջին անգամ լինելով Հայաստանում, քնարական հերոսը իր հոգու մեջ է առել երկիրը՝ լուսե կղզին, հնադարյան վանքը. խանձված խոտերը, ջինջ երգերը, կարկառն ի վեր մազցող կածանը, և չի մոռանում երբեք: Դեռ ավելին. «Հեղեղում են համկարծ» երգի մեջ ընդգծում է.

*Ահա նա՝ դիմագիծն օրերի,
Դուռը, որ դեպ գալիք է քացվում,
Լսո՞ւմ ես ինչպես է կամուրջով
Մտեղծագործ ժամանակը անցնում:*

(Թարգմ. Գ. Լևինի)

Վ. Զվյագինցևան հայաստանյան շարքում հայտնաբերել է հայ մարդու կերպարը: Դա դարերի փորձություններին դիմացած, ժամանակի դժվարությունները հաղթահարող, գալիքի իր հույսի անմարտմ շողելով փառված մարդն է, որ ժամանակների մեջ հյուսել է իրեն հասուկ ներաշխարհը և ազնվորեն քացում է աշխարհի առջև: Բանաստեղծուհին հային տեսնում է որպես մարդու արարչագործական ուժի խոսացում: Հայը իր քարքարոտ բնության արքան է, իր ճակատագրի տերը, ինքն իրենից չհետացող զինվորայն, իր անցած բոլոր դարերը խմաստավորող լուսավառ ոգին: Հայը, ըստ Զվյագինցևայի, բնության և աստվածային ոգու միասնություն է, որ դրսևորվում է քրտնաթոր աշխատանքով, պայծառ մտքով, բարության երազով: Վլադ՝ «Ոսկեվագ» բանաստեղծությունը (թարգմ. Վ. Դավթյանի): Բանաստեղծուհին Ոսկեվագ գյուղում տեսնում է հայ մարդու արարող ուժի գեղեցկությունը՝ հակինթ խաղողը, քավիշ դեղձը, հազարերանգ ծաղիկները... Բայց ամենից զլխավորը՝ այդ ամենը ստեղծող մարդուն: Ինչպես երգչուհին է բացականչում. «Բրիգադիր հայրն այս գյուղում հպարտ է իր Հերոս որդով», և այդ մարդիկ իրենց կրծքերի տակ այնքան կրակ ունեն ամբարած, որ կիեքիքի բոլորին. «Ամբողջ ձմռան համար այստեղ դու ջերմություն կհավաքես»: Այստեղ հայ մարդը երևում է իր բազմակողմանի հարաբերություններին, հարուստ ներաշխարհի ճրքերանցներով, որպես ժամանակի հոգսերով ապրող, իր օջախն ու երկիրը ծաղկուն դարձնող անհատ: Նա պարզապես ճերգայացվում է որպես իր նախնիների լավագույն ավանդույթները շարունակող հարազատ օջախի և հայրենիքի լինելությունը հաստատող, պատիվը բարձր պահող ժառանգորդ: Նա ոսկե վագից քամում է ոսկեվագ զինին, որ ուրիշները վայելեն, ջերմանան: Մակայն չպետք է կարծել, որ բանաստեղծուհին Ոսկեվագ գյուղը պատկերում է վայելքների հյուսվածքով: Նա գյուղում տեսնում է բոլոր ժամանակների, բոլոր սերունդների արածը, թողածը, և որ կարևորն է, ժամանակակիցների և՛ տառապանքը, և՛ գեղեցիկ ապրելու ծարավը: Իմաստուն ծերունու մոտ քեֆի ժամին «Ոսկեվագ» զինու բաժակը դատարկելով, քնարական հերոսը նկատում է, որ ծերունու կողքին կանգնած տարեց մի հայուհի, որ այն ահեղ պատերազմում կորցրել էր զավակին, ի պատիվ հյուրերի, իր զավաքից խմում է մի կում զինի: Պատկերը հիանալի է, բանաստեղծուհին առանց երկարաբանելու, ընդհանրացնում է.

*... Դուք կխմեք հավանաբար անուշ զինին Ոսկեվագի,
Թող նրա մեջ արտացոլվեն և կանաչը բնքուշ վագի,
Եվ այս մաքլիկ խմաստացած, և իրիկունը այս խաղող,
Եվ պատիկ մոտ բոցկլտացող այն վարդերը ցողաշաղախ:*

Հայ մարդու հոգևոր աշխարհի մեջ բախանցելու և նրա անցած ճանապարհի վեհությունը ցույց տալու համար Վ. Զվյագինցևան նկարագրել է նաև հայկական բնու-

թյունը: Ձարմանալի և հաճելի անհամատեղություն ենք տեսնում Վ. Չվյազինցևայի ռուսական և հայկական բնաշխարհները նկարագրող երգերի մեջ: Ռուսական բնությունը հյուսիսային առանձնահատկություններով և հայկականը՝ հարավային մրբերանգնեքով պատկերված են խորիմացությամբ: Դա բացատրվում է նրանով, որ Վ. Չվյազինցևան մեկ անգամ չի եղել Հայաստանում, մա շրջագայել է բոլոր շրջաններում, հոգու մեջ առել Հայոց աշխարհի պատկերը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այն բանաստեղծուհու հարազատ մայրն է՝ իր հայացքով, ծայրով, փայփայանքով, ամենաչնչին նշաններով անգամ: Հայաստանի հանդեպ ունեցած անկեղծ ու նվիրական սերը Վ. Չվյազինցևային դարձրել է նաև հայկական բնության գիտակ: Բանաստեղծուհին ճանաչելով Նաիրի երկրի բնությունը, վերագտավ նաև հայ մարդու գոյության նախնական ու հավերժական չափանիշը, իրեն դրսևորելով որպես հայոց հողի ու ջրի հին ու հարազատ զավակը: Ձյունապատ դաշտերին սովոր բանաստեղծուհուն Հայաստանը ներկայանում է որպես «արևի երախտում շիկացած շոգի ու լեռների աշխարհ» («Իմ Հայաստան»), ուր Լոռու ձորում «անակնկալ կեսօրն է մրջնում» («Ինչպես մարդուն են խոր սիրահարվում»), ուր «վերջալույսը նման է հին պարսկական գորգի», («Հյուր Մարտիրոս Մարյանի մոտ»), ուր «Երկինքը ջինջ է, ռնգ կանգնած ջուր», («Նկարիչն ու ժողովուրդը»): Օրինակները կարելի է շարունակել: Այս առումով հատկանշական է «Աշուն» բանաստեղծությունը (թարգմ. Մ. Մարգարյանի): Դիշտ է, աշման բարիքներն արարող մարդու մասին խոսք չկա բանաստեղծության մեջ, սակայն մարդու և բնության բազմաճիտ կապն ու պայմանավորվածությունը երևում են պատկերային հյուսվածքում: Բանաստեղծուհին աշմանային բարիքների մեջ որոնում ու գտնում է առատությունն արարող մարդու բարեմասնությունները: Երևանի կենտրոնից մինչև Քանաքեռ, աշմանային գույների մեջ խաղողի ողկույզներ են, մրգերի հակեր, կապտավուն սալոր, կրակե բիրար և այլն: Իրենց ստեղծողների պես մրգերի «այտերը վառված են», սալորները կարծես «ածուխե աչքեր են», խմորի վրա «վերջալույսն է իջել» և այլն և այլն: Տալից-տող, տնից-տուն բանաստեղծուհին հասնում է հայ մարդու և հայկական բնության միասնության առեղծվածին, հայամարերում բնության հզոր ու վիթխարի ուժը, ապա այդ ֆոնի վրա՝ հայ մարդուն: Չվյազինցևան այստեղ բնության ձևերի ու գոյության սկզբունքի պատկերի մեջ բնականացնում է հայ մարդուն, երևան բերում Հայաստան կամ Հայաստան- հայ հասկացությունների միասնությունը: «Իմ Հայաստանը» շարքում այս միտումը Վ. Չվյազինցևայի գեղագիտական խղետն է:

Վ. Չվյազինցևայի «Իմ Հայաստանը» շարքը բազմազան հետաքրքրությունների, հարուստ զգացմունքների արտահայտություն է: Տարբեր բեմաներով գրված երգերը մի ամբողջություն են կազմում, որից հառնում է Հայաստանի և հայ մարդու ընդհանրացված կերպարը: Հայաստանի յուրաքանչյուր վայր, հուշարձան, ճանաչված անհատ բանաստեղծուհուն ներկայանում են հարազատի կանչով, իսկ ինքն էլ արձագանքում է նրանց դուռեր զգացումով:

Հայ ժողովրդի ոգեղեն գեղեցկության արտահայտություն է «Հայկական պարը» բանաստեղծությունը: Հայոց և հայ ժողովրդի դարավոր, հղկված միասնական **ընդգրկումների մեջ** բանաստեղծուհին տեսնում է երկաթաարդի և հայ աղջկա հոգեկան կերտվածքը, վեհությունը, նազանքը, ձգտումը: Երգի մեջ հայկական պարերանակը հասնմատվում է լեռնապարի հովի, հայրենու ձեռքերը՝ աղավմու քների հետ: Բանաստեղծուհին հայկական պարի մեջ տեսնում է երգի և գույնի մրցույթ, նրանում ասես արտացոլվում է հայոց լեռնաշխարհը: Դիտելով սղայի ատմական և աղջկա ճկուն պարը, բանաստեղծուհին ընդհանրացնում է.

*Կոպտությունն այս, այս նազանքը,
Ա՛յս, մահու չափ հարազատ է,*

*Միրտըս նրանց հնազանդ է,
Հայացքիս դեմ՝ Արարատն է:*

(Թարգմ. Ս. Կապուտիկյանի)

Վ. Ջվլագինցեան բազմազան քեմաների մեջ որոնել և գտել է Հայաստանի քնանալի և հոգևոր կերտվածքը: Հայ մշակույթի ականազոր ներկայացուցիչներին գնահատել է որպէս աստվածների բոյ, որ աչքի է ընկնում առաջին հերթին բարոյականութեան իր դիմագծով՝ ժողովրդասիրությամբ, կենսասիրությամբ, հայրենասիրությամբ, մարդասիրությամբ և այլն, և այլն: Այստեղ արժէ նշել «Ավետիք Բասահակյան» բանաստեղծությունը (թարգմ. Պ. Միրայեկյանի): Խոսելով Ավ. Բասահակյանի տաղանդի, երգի ժողովրդայնության մասին, բանաստեղծուհին հպարտությամբ է նշում Ավ. Բասահակյանի և Ալ. Բլոկի ստեղծագործական բարեկամության մասին: Բլոկի թարգմանությունների շնորհիվ հայ դասականի երգերը դարձել են ժողովուրդների բարեկամությունն ամրապնդող ազդակներ: Ռուս բանաստեղծուհին նշում է. «Բասահակյանի երգերում... ես ծայրն եմ լսում հայոց աշխարհի», նրա երգերի «հուրն ու բնքշանքը», որ հայոց ժեռ քարից ընձյուղված ծաղիկների են մնան, «Հայ ժողովրդի անկաշառ հոգու» արտացոլումն են: Բասահակյանի երգերը կարելի է խել անգամ ծառերի սոսափյունների մեջ:

Ավաղեմիկոս Լ. Մկրտչյանը ժամանակին գրել է. «Ջվլագինցեան ռուսական պոեզիա մտցրեց ոչ միայն հայ քնարերգուներից շատերին, այլև՝ Հայաստանի իր բանաստեղծական պատկերացումը, Հայաստանի կերպարը»¹:

Վ. Ջվլագինցեայի «Իմ Հայաստանը» երգաշարը Հայաստանի և հայ ժողովրդի հանդէպ ունեցած անկաշառ սիրտ և հարգանքի խոստովանություն է, որ գնահատվում է որպէս ռուս ժողովրդի ազնիվ զավակների բանաստեղծական լավագույն ավանդույթների շարունակություն, որ սկիզբ ունի, բայց չունի ավարտ, որովհետև հավերժությունը վերջակետ չի ճանաչում:

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Ստացված է 05.10.1997 թ.

К. Ханаян

Армения в поэзии Веры Звягинцевой

Резюме

Вера Звягинцева (1894-1972 г.) одна из признанных представителей русской поэзии XX века. Еще с начала 30-ых годов знаменитая поэтесса неоднократно бывала в Армении и глубоко изучив армянскую культуру, совершила большое количество переводов из армянской поэзии, тем самым попав в число бескорыстных и искренних друзей армянской литературы.

Связав свою жизнь с богатой армянской культурой, Вера Звягинцева создала чудесный цикл стихотворений, посвященных Армении и армянскому народу.

В предлагаемом исследовании мы подвергнем разбор и оценке стихотворения, вошедшие в этот цикл. Отмечается, что Вера Звягинцева, с одной стороны придерживалась традиции русской поэзии, с другой изучала и армянскую классическую литературу, и в то же время поэзию представителей своего поколения: Ованеса Шираза, Паруйра Севака, Сильвы Капутикян, Геворга Эмина, Амо Сагияна, Рачья Ованисяна, М. Маркарян и др.

Вера Звягинцева опубликовала сборник своих стихов под названием "Моя Армения", львиную долю которой составляют стихотворения из цикла с одноименным названием.

Разбирая цикл, приходим к выводу, что поэтесса гордилась своей национальной

¹ Լ. Մկրտչյան, "Հայաստանի բանաստեղծը", "Հայաստան" իրաւ., երևան, 1974 թ., էջ 3:

принадлежностью, одновременно выражая искреннюю дочернюю любовь к армянскому народу.

Любовь к Армении у Звягинцевой равноценна ее любви к армянам.

Данный цикл мы оцениваем как поэтическое отражение истории, судьбы, воспоминаний, чаяний армянского народа.

Поэтесса сумела найти и отразить образ армянина на фоне прошедшего армянским народом пути, современной жизни и природы Армении.

Цикл стихов Веры Звягинцевой "Моя Армения" мы оцениваем как признание бескорыстной любви и уважения к Армении и армянскому народу, как продолжение прекрасных поэтических традиций достойных сыновей и дочерей русского народа.